

իբրե խորթ մայր չի տար կենաց ապ-  
րուստը . — դու չե՞ս դարձեալ առատ  
բարեկամ այն ազգաց՝ որոնք աւելի եր-  
ջանիկ ափունք կու բնակին . ինչպիսի  
պարէն և գանձեր կու դիզեն անոնք  
քու արգասաւոր ծոցէդ : Ը ատ անգամ  
աներկիւղ մարդիկ կ'ընկղմին քու ա-  
լեացդ մէջ, և վեր չեն ելներ ինչուան որ  
չի գտնեն ան զարմանալի քարերը, որոնց  
փայլմունքն կու զարմացընէ արեգական  
լյուր և թագաւորաց ձակատը կու զար-  
դարէ :

Դեմ ուզեր քու բնակչացդ վրայ  
խօսիլ . անմիւ են անոնք, երկրիս վրայ  
ու օգուն մէջ եղող չնչաւորաց պէս՝  
կու քարոզէն անոր կարողութիւնը և  
իմաստութիւնը, որ ամէն բան ստեղ-  
ծեց : Բայց ինչ չպէս թողումլութեամբ  
անոնց թագաւորը, և իմաթանը . ջուրն  
գետի պէս կու մանէ անոր բերանը .  
աչքերն բոցի պէս կու ցոլան, երկամն  
իրեն համար ջրային եղէդ մ'է, պղին-  
ձըն՝ փտտած փայտ մը : Եթէն չի փախ-  
չիր, քարերը թեթե տերեւներու պէս  
կ'ընկնան վրան . կ'արհամարհէ մուրժը  
իբրե չոր յարդ մը, կու ծիծաղի անոր  
վրայ՝ որ իրեն տէկ ու նիզակ կու նետէ .  
անցած տեղէն լցոն կու շողայ, ան-  
գունդք կու Ճերմկնան իր առջե . չկայ  
ոյժ մը՝ որ համեմատի իրենին : Ի ուանց  
վախի ամէն բան կու տեսնէ իր ներքեր  
և ինքնէ թագաւոր ովկիանու ամենայն  
գոռող որդւոցը :

ՈՎ Աստուած, քու արարածոցդ  
վրայ մտածելով առանց քեզ հասնելու  
կու մոլորիմ: Խակայն դուն միայն եղիր  
նիւթ իմ զարմացմանս և իմ օրհնու-  
թեանս . միայն նպատակ իմ փափագա-  
նացս և իմ յուսոյս: Այս ալեացս մէջ  
փնտուածս է՝ իմ սրախս խռովութիւնը՝  
երբ քեզմէ հեռու է: Տեսած եմ լեռ-  
ներ՝ որ իբրեւ հառաջանք ըղձից երկրի՝  
կու սլանան դէպ 'ի յերկինք . հեղեղ-  
ներ և գետեր՝ որ գանգատ թողուն  
իրենց եղերացը վրայ . և Ովկիանոսը՝  
որ անհանգիստ կու տատանի շարունակ  
ծփմամբ . այնպէս իմ սիրտս այլ կու  
բարձրանայ, կու հեծէ ու կու շարժի:  
Կ'ուզեմ գտնել այն ալեաց մէջ քու  
անբաւութեանդ պատկերը, յաւիտե-  
նական ովկիանու պատկերը, առ որ կու  
դիմեն ամենայն արարածք, որուն ես  
այլ կու հառաչեմբոլը եռանդեամբ: Ովկիան  
երկինից, ովկիան խաղաղու-  
թեան, լուսոյ, սիրոյ . ովկիան փառաց,  
պատւոյ և անմահութեան, թող որ  
իմ մուածմունքս շատ անգամ ծիին  
քու ալեացդ վրայ, ինչուան որ հոգիս  
իրապէս ընկղմի անոր մէջ, միշտ ծա-  
րաւի և միշտ արբած, միշտ անյագ և  
միշտ յագեալ . իմ սիրտս ունի անանկ  
անդունդներ՝ ուր ամէն մարդկային եր-  
ջանկութիւնք կու կորսուին . քեզի հա-  
մար ստեղծուած են այն անդունդքն,  
և քու անչափութիւնդ միայն կրնայ  
զանոնք լուլ ծածկել:

## Նոր Քնար

### Անընկեր

**Վայրի հաւուկ մի բըռնած**

**Ու բերած զըրած զինքն ի նեղ զընտան .**

**Չուրախանար սիրտ բաժանելցս յընկերաց :**

**Ոըրապեկեալ եմ միջակոտոր ,**

**Ճար չունիմ, ինչ լինամ գերիս .**

**Չուրախանար սիրտ բաժանելցս յընկերաց :**

Ունկ հազար գունզգուն փետուր  
 Բներած՝ ինձ խաղլիաթ կու տան  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ շաքարն է մաղած շաղուած  
 Բներած ինձ կերակուր կու տան,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ զպլպուն ու զզումրին  
 Ինձ երգասաց կու տան,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ հազար թախտի հուքմն տան  
 Ու հարուր հազարի տէր այնեն,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ հազար ինձ մէջլիս դընեն  
 Վաղցը երգով զիս զուարձացընեն,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ հազար ինձ ծառայ բերեն  
 Ենհամար հեծել ձիաւոր,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ գարպաս մեր չենած ոսկով  
 Օարդարած անգին մարգարտով,  
 Չուրախանար սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ հնար ու ճալրակ լիներ  
 Ինձ ելնել ի նեղ զնտանէս,  
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ունկ լիներ ու թաշէի, բարձրանայի տեսանել զերամն,  
 Յայնժամ ուրախանայր սիրտ բաժանելցոյս յընկերաց։  
 Ու խառնիմ ի յերամն։  
 Իմդ զարթնում ի քնոյ, զերդ տղայ մօր գըկի ի քուն,  
 Եւ օրհնեմ զի՞շտուած կենդանի։  
 Դրաց զիս ի յերամն։

Նկարագրութիւն քաղաքին Կարնոյ  
 և մեծ գետնաշարժին որ եղաւ յա-  
 մին 1859։  
 (Տես երես 146)

Առդ այս ամենայն պատճառներ մէկ  
 տեղ բերելով կ'ըսեմք որ Կարնոյ գա-  
 ւառին մէջ գետնաշարժն պակաս չէ.  
 ամէն տարի երկու երեք անգամ սա-

աանութիւնը կ'ըլլան, է որ թեթև,  
 է որ սաստիկ. որոց քանի մը գլխաւոր-  
 ները սկիտի յիշատակեմ։  
 Ո՞եր դարուն հասած ծերեր, ո՞  
 ութասուն կամ իննսուն կը հաշուեն ի-  
 րենց տարիքը, կը պատմեն որ ասկէ դար  
 մը յառաջ սոսկալի սասանութիւն մ'ե-  
 զեր է Կարնոյ գաւառը, մասնաւորա-  
 պէս քաղաքը. աւագ շաբաթէն սկսեալ  
 մինչեւ վերացման խաջին պահը ան-